

աւետաբերը տեսնելու, եւ ահա երեւցաւ երիտասարդ կին մ'ել իւր բոլոր գեղեցկութեամբ Ափրոդիտի նման, որու երեսին վլայ ուրախութիւն կը նշուլէր եւ լեցուն քսակ մը ձեռքը աւետաբերին կարկառէր:

Նոյն միջոցին միւս քովի պալատան՝ ուր Մարտինէ կայսրուհուն կողմնակիցքը կը բնակէին, դռները կը գոցուէին եւ վարագոյրները կը ծածկուէին, իսկ Չաւեն իւր տեսածով գոհ չի կրնալով լինիլ, կը դառնար ծովեզրը, կը նստեր նաւամատոյցին վրայ, եւ կը մտածեր թէ իր սիրուն Արփենին արդեօք հոն ներսը՝ այդ պալատին մէջն էր, այդ այնչափ գեղեցիկ եւ այդչափ անբարոյական կնոջ ճանկերուն մէջ ինչ չար օրինակներու ենթարկուած էր:

Այս մտածութեամբք եւ մտատանջութեամբք երկայն ժամանակ մնացած՝ ծովուն ալիքներուն կը նայեր, երբ յանկարծ թիակներու ձայն մը լսեց եւ ճերմակ ներկուած ոսկենիշ եւ ոսկեգօծ թելատարած արծիւ մը ծայրը մեծ նաւակ մը տեսաւ, որ ծովուն ափունքը կը քերեր. եօթ շուխտ կորովի երիտասարդք կը թիավարէին. նաւուն խորը կ'երեւէր գեղեցիկ կին մը բեհեզներու եւ ծիրանիներու մէջ փաթաթ եալ, ոսկեթել բաստեռանց վրայ ընկողմանեալ: Շուրջը՝ վեց Յատ տասը-տասներկու տարեկան շքեղագարդ աղջկունք շարուած էին, իսկ կռնակը բարձրաւանդակին վրայ մաքուր հագուած սպասաւոր մը սիրամարգի փետուրներէ հովանոց մը կը բռներ Տիկնոջ գլխուն վրայ՝ որու ծարիր աչքերը ուրախութեան մէջ կը լողային: Այս նոր Կըղեպատրան իւր քիչ առաջ տեսած Տիկինն էր, որ արթունիք կ'երթար, ուստի իւր սուր աչքերը տնկեց Չաւեն եւ քիչ մնաց, որ նաւուն մէջ նետեր ինքզինքը. վասնզի անմիջապէս դիմացը մօտը ճանչցաւ Արփենիի աննման աչքերը. «ո՛հ» ըրաւ եւ ինքզինք սանձեց. ինչչափ մեծցեր էր չորս տարուան մէջ: ուզեց ոտք ելնել եւ ոտքերը կ'ապուեցան. նաւակը սրացաւ անցաւ ճերմակ փրփուր մը եւ ճեղք մը թողլով ծովուն երեսին վրայ, որ քանի մը վայրկենէն անհետացաւ: Ծերը ծունկի եկաւ, «Փա՛ռք քեզ, աստուած իմ, փառք քեզ, դու որ այսօր այսչափն ինձ շնորհեցիր, անշուշտ իմ հրեշտակիս ազատութիւնը նաեւ կը շնորհես, դու չես ներեր, որ Մամիկոնեանց անարատ ծաղիկը այդ աղտեղի ձեռաց մէջ խամրի, եւ խեղճ Չաւենի կը շնորհես տանիլ Արփենին իւր սուրբ մօր գերեզմանին քով չոքեցնելու եւ եղբօր ձեռքը յանձնելու»:

Այսչափ յուզմունքներ ունենալէն վերջ ազնուասիրտ զինուորը ելաւ կանգնեցաւ եւ մտքին մէջ հազար տեսակ հնարքներ կը ստեղծեր յափշտակելու համար իւր կորուստը, երբ մութն սկսաւ իջնել, եւ ինք քաշուեցաւ իւր խղճուկ բնակարանը, այն մեծ գոհութիւնն «ունենալով, որ իւր Արփենին իրմէ հեռու չէր: